ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Մեր ներքին տեսութիւնը։—Գեներալ նահանգապետի կարգադրութիւնը մամուլի մասին։—Դպրոցական համագումար։—Բարձրագոյն դպրոց Կովկասում։—Ներքին լուրեր։

Շուշուայ թեմի Վարանդայ գաւառի հայ գիւղերը աւերուեցան ու հիմնովին քարուքանդ եղան, ամենաանպատկառ ձեւով եւ բռնաբարութեան բազմաթիւ դիպուածներով։

Այդ մասին մեր ընդարձակ ներքին տեսութիւնը շարուած եւ սրբագրուած էր արդէն, երբ լոյս տեսաւ Թիֆլիսի գեներալ-նահանգապետի ներքոյգրեալ շրջաբերական հրամանը, որի պատճառով անկարող եղանք հրատարակել մեր պատրաստի յօդուածները։

Թիֆլիսի գեներալ նահանգապետը կայացրել է հետեւեալ որոշումը.

Առաջարկում եմ Թիֆլիսի թերթերի խմբագիրներին այլ ևս չը տպագրել իրանց խմբագրութեամբ լոյս տեսնող հրատարակութիւնների մէջ և արտատպութիւններ չանել ուրիշ քաղաքների թերթերից այն բոլոր տեղեկութիւնների մասին, որոնք վերաբերում են զինուորական-վարչական անձանց, նրանց վարչութիւններին և կարգադրութիւններին, մանաւանդ զինուորական տեսչութեան և գլխաւոր շտաբի գաղտնի հրամանների մասին, որոնք նախասահմանուած են զօրքի համար, և ոչ թէ հասարակութեան։

Սրանից անկախ՝ միանգամայն արգելում եմ տպա-

գրել տեղեկութիւններ ինչպէս զանազան զօրախմբերի, թէ պատժական և թէ ուրիշների մասին, որոնք ուղարկուում են բարձր իշխանութեան կարգադրութեամբ, նոյնպէս և այդ զօրախմբերի հետ ուղարկուող վարչական պաշտօնեաների գործողութիւնների մասին, մինչև որ տեղեկութիւններ լոյս կը տեսնեն մամուլի պաշտօնական օրգաններում, ինչպէս օրինակ. «Правит. Вѣстникъ»-ում, «Русскій Инвалидъ»-ի մէջ, կամ «Кавказъ» թերթի պաշտօնական բաժնում։

Միևնոյն ժամանակ անհրաժեշտ եմ համարում նորից կրկնել իմ պահանջը, որ խմբագիրները աւելի ուշադիր վերաբերուեն իրանց խմբագրութեամբ լոյս տեսնող թերթերում զանազան լուրեր տպագրելու ժամանակ, որովհետև լուրերը ստուգելիս այդպիսիները համարեա սուտ են դուրս գալիս, գրգռում են հասարակութիւնը և խախտում հաւատը դէպի տպագրական խօսքը։ Այն պարբերական թերթերը, որոնց ես կը նկատեմ, որ չեն ցանկանում ենթարկուել իմ այս պահանջներին, անմիջապէս կը փակուեն, իսկ նրանց խմբագիրները, օրէնքով ինձ վերապահուած իրաւունքով, կարտաքսուեն իմ իրաւասութեան ներքոյ գրուած գիներալ-նահանգապետութեան սահմաններից։

14 ապրիլի 1906 թ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Թիֆլիսի թեմական առաջնորդի անունով ստացուել է Վեհափառ Հայրապետի մարտ 20 թուակիր հետևեալ կոնդակը.

«Տեսնելով դպրոցների համար հաստատուն ծրագրի ու կանոնադրութեան անհրաժեշտ կարիքը՝ որոշեցինք ներկայ տարուայ մայիս ամսին գումարել սբ. Էջմիածնում մի ժողով թեմական առաջնորդներից և Ռուսաստանի մեր վիճակային դպրոցների ուսուցիչներից և հոգաբարձուներից՝ քննելու համար մեր եկեղեցական-ծխական դպրոցների կանոնադրութեան ու ծրագրի այն նախագիծը, որ մշակել է Մեր կողմից կազմուած Թիֆլիզի յանձնաժողովը, որպէսզի քննութիւնից յետոյ Մեր հաւանութեանն ու հաստատութեանը ներկայացնէ իր